ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

<<ՀՔ-ԳՀԱՊՁԲ-18/5>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Հարենցավան **_28_ _մարտի_ _2018թ._**
ժամը _10^{00}_

Մասնակցությամբ՝

Հանձնաժողովի նախագահ՝ **Բ. Բալբաբյան (ԳՊ/ԳԱՊ)**
Հանձնաժողովի անդամներ՝ **Վ. Բարսամյան (ԳՊ/ԳԱ)**
Ա. Ծերունյան (ԳՊ/ԳԱ)
Ա. Զաքարյան (ԳՊ/ԲԱ)
Ս. Հովհաննիսյան (ԳՊ/ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ **Պ. Գաբրելյան (ԳՊ/ՄՀՄ)**

1. <<ՀՔ-ԳՀԱՊՁԲ-18/5>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտի բացման մասին

1.1 Հայտը բացվել է էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետև՝ Համակարգ)՝ www.armeps.am կայքի միջոցով՝ 2018 թվականի մարտի 28-ին ժամը 10^{00}-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. Տեղեկատվություն գնվելիք ապրանքի գնի և հայտ ներկայացրած մասնակցի մասին

2.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված.

Հ/հ	Ապրանքի անվանումը	Ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	Աղբարկղեր, պլաստմասե	1900000

2.2 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Հայտ ներկայացրած մասնակցի		
	անվանումը	էլեկտրոնային փոստի հասցեն	Տ/Փ-ի ստացականի հ/հ
1	<<ԳԱՎԱՌՏՐԱՆՍ>> ՍՊԸ	gavartrans@mail.ru	000063100

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. Տեղեկատվություն մասնակցի ներկայացրած հայտի՝ պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 <<ԳԱՎԱՌՏՐԱՆՍ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան, մասնավորապես՝

- <<ԳԱՎԱՌՏՐԱՆՍ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում առկա բոլոր փաստաթղթերը ստորագրված և կնքված են մասնակցի կողմից: Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 12)-րդ ենթակետով սահմանվում է, որ ***գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով***:

3.2 Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի ***(հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում***

հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են), և հիմք ընդունելով <<ՀՔ-ԳՀԱՊՁԲ-18/5>> ծածկագրով գնանշման հարցման հրավերի I ՄԱՍ-ի 7.19-րդ կետը ***(Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով)***՝ հանձնաժողովը որոշեց <<ԳԱՎԱՌՏՐԱՆՍ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

4. Տեղեկատվություն հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկի մասին

4.1 Մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը ներկայացված է ստորև.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի կողմից առաջարկված գները (ՀՀ դրամ), ընդ որում՝		
		Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին N 1				
1	<<ԳԱՎԱՌՏՐԱՆՍ>> ՍՊԸ	1541667	308333	1850000

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

5. <<ՀՔ-ԳՀԱՊՁԲ-18/5>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

5.1 Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ <<ՀՔ-ԳՀԱՊՁԲ-18/5>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

6. Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի անուն-ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Բ. Բալբաբյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Վ. Բարսամյան**
(ստորագրությունը)

_____ **Ա. Ծերունյան**
(ստորագրությունը)

_____ **Ա. Զաքարյան**
(ստորագրությունը)

_____ **Ս. Հովհաննիսյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Պ. Գաբրելյան**
(ստորագրությունը)